ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ԿՈԼԵԳԻԱ

ՈՐՈՇՈՒՄ

«30» սեպտեմբերի 2014 թվականի **թիվ 180** քաղ. Մոսկվա

Մաքսային միության արտաքին եւ փոխադարձ առեւտրի ինտեգրված տեղեկատվական համակարգում տեղեկատվական փոխգործակցություն իրականացնելիս օգտագործվող էլեկտրոնային փաստաթղթերի եւ տեղեկությունների կառուցվածքների ռեեստրի վարման եւ կիրառման մասին

«Մաքսային միության արտաքին եւ փոխադարձ առեւտրի ինտեգրված տեղեկատվական համակարգ ստեղծելու, դրա գործունեությունն ու զարգացումն ապահովելու մասին» 2010 թվականի սեպտեմբերի 21-ի համաձայնագրի 7-րդ հոդվածին համապատասխան՝ Մաքսային միության արտաքին եւ փոխադարձ առեւտրի ինտեգրված տեղեկատվական համակարգի ինտեգրացիոն հատվածները ստեղծելիս, զարգացնելիս եւ դրանց գործունեությունն ապահովելիս կիրառվող կազմակերպական եւ տեխնիկական լուծումների միասնականացման նպատակով՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիան **որոշեց**.

1. Հաստատել կից ներկայացվող՝ Մաքսային միության արտաքին եւ փոխադարձ առեւտրի ինտեգրված տեղեկատվական համակարգում տեղեկատվական փոխգործակցություն իրականացնելիս օգտագործվող էլեկտրոնային փաստաթղթերի եւ տեղեկությունների կառուցվածքների ռեեստրի վարման եւ կիրառման կարգը:

2. Ձեւավորել եւ տեղադրել Մաքսային միության արտաքին ու փոխադարձ առեւտրի ինտեգրված տեղեկատվական համակարգում տեղեկատվական

փոխգործակցություն իրականացնելիս օգտագործվող էլեկտրոնային փաստաթղթերի եւ տեղեկությունների կառուցվածքների ռեեստրը ինտերնետ ցանցում՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի պաշտոնական կայքէջում մինչեւ 2014 թվականի դեկտեմբերի 1-ը:

3. Սույն Որոշումն ուժի մեջ է մտնում դրա պաշտոնական հրապարակման օրվանից՝ 30 օրացուցային օրը լրանալուց հետո:

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի նախագահ

ЕВРАЗИЙСКАЯ ЭКОНОМИЧЕСКАЯ КОМИССИЯ
ДЛЯ ДОКУМЕНТОВ

Վ. Խրիստենկո

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

Եվրասիական տնտեսական
հանձնաժողովի կոլեգիայի 2014 թվականի
սեպտեմբերի 30-ի թիվ 180 որոշմամբ

ԿԱՐԳ

Մաքսային միության արտաքին եւ փոխադարձ առեւտրի ինտեգրված տեղեկատվական համակարգում տեղեկատվական փոխգործակցություն իրականացնելիս օգտագործվող Էլեկտրոնային փաստաթղթերի եւ տեղեկությունների կառուցվածքների ռեեստրի վարման ու կիրառման

1. Սույն կարգով սահմանվում են Մաքսային միության արտաքին եւ փոխադարձ առեւտրի ինտեգրված տեղեկատվական համակարգում տեղեկատվական փոխգործակցություն իրականացնելիս օգտագործվող Էլեկտրոնային փաստաթղթերի եւ տեղեկությունների կառուցվածքների ռեեստրի (այսուհետ՝ ռեեստր) վարման ու կիրառման կանոնները:

2. Ռեեստրն իր մեջ ներառում է Մաքսային միության եւ Միասնական տնտեսական տարածքի անդամ պետությունների լիազորված մարմինների (այսուհետ՝ անդամ պետություններ), ինչպես նաեւ անդամ պետությունների լիազոր մարմինների եւ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) միջեւ արտաքին եւ փոխադարձ առեւտրի ինտեգրված տեղեկատվական համակարգում (այսուհետ՝ ինտեգրված համակարգ) տեղեկատվական փոխգործակցություն իրականացնելիս օգտագործվող էլեկտրոնային փաստաթղթերի եւ տեղեկությունների կառուցվածքների ամբողջական ցանկը :

3. Ռեեստրը ներառված է Հանձնաժողովի ընդհանուր տեղեկատվական

ռեսուրսների կազմում:

4. Օպերատորը ձեւավորում եւ վարում է ռեեստրը էլեկտրոնային եղանակով:

5. Ռեեստրի օպերատորի գործառույթներն իրականացնում է Հանձնաժողովը:

6. Հանձնաժողովը ռեեստրում ներառված տեղեկությունների տիրապետողն է եւ սահմանված կարգով՝ անհատույց եւ ոչ խտրական հիմունքներով ապահովում է դրանց հասանելիությունը շահագրգիռ անձանց «Ինտերնետ» տեղեկատվական-հեռահաղորդակցության ցանցում՝ Հանձնաժողովի պաշտոնական կայքէջի միջոցով:

7. Էլեկտրոնային փաստաթղթերի եւ տեղեկությունների կառուցվածքների (էլեկտրոնային փաստաթղթերի եւ տեղեկությունների փոփոխված կառուցվածքների) ներառումը ռեեստրում իրականացվում է «Էլեկտրոնային փաստաթղթերի եւ տեղեկությունների կառուցվածքների, այդ թվում՝ ինտեգրված համակարգի միջոցներով ընդհանուր գործընթացներն իրականացնելու համար մշակվողների կառուցվածքները հաստատելու մասին» Հանձնաժողովի կոլեգիայի համապատասխան որոշման պաշտոնական հրապարակման օրվանից՝ հինգ աշխատանքային օրվա ընթացքում՝ նշելով դրանց օգտագործումն սկսելու ամսաթիվը՝ Հանձնաժողովի կոլեգիայի որոշմանը համապատասխան:

8. Ռեեստրում իրականացվում է կառուցվածքների եւ էլեկտրոնային փաստաթղթերի ու տեղեկությունների, ինչպես նաեւ դրանցում կատարվող փոփոխությունների մասին տեղեկությունների նկարագրության պահպանում:

9. Ռեեստրի վարումն իրականացվում է ինտեգրված համակարգի Հանձնաժողովի՝ ինտեգրացիոն հատվածի ենթակառուցվածքի եւ ծրագրային միջոցների օգտագործմամբ՝ հետեւյալ խնդիրների լուծման նպատակով՝

ա) ռեեստրում ներառված էլեկտրոնային փաստաթղթերի եւ

տեղեկությունների կառուցվածքների պահպանում ու հավաստիության ապահովում (ամբողջականություն, անփոփոխություն կամ կատարված փոփոխությունների իրավաչափություն).

բ) շահագրգիռ անձանց համար ռեեստրի հասանելիության ապահովում.

գ) էլեկտրոնային փաստաթղթերի եւ տեղեկությունների հաստատված կառուցվածքների ներառում ռեեստրում՝ Հանձնաժողովի կոլեգիայի որոշման հիման վրա.

դ) ռեեստրում ներառված էլեկտրոնային փաստաթղթերի եւ տեղեկությունների կառուցվածքներում փոփոխությունների կատարում՝ Հանձնաժողովի կոլեգիայի որոշման հիման վրա:

10. Էլեկտրոնային փաստաթղթի կամ տեղեկությունների յուրաքանչյուր հաստատված կառուցվածքի համար ռեեստրում նշվում են էլեկտրոնային փաստաթղթի կամ տեղեկությունների կառուցվածքի անվանումը, նպատակը, ծածկագիրը եւ տարբերակը, «Էլեկտրոնային փաստաթղթի կամ տեղեկությունների կառուցվածքը հաստատելու մասին» Հանձնաժողովի կոլեգիայի որոշման անվանումը եւ վավերապայմանները, դրանց օգտագործումն սկսելու եւ ավարտելու ամսաթվերը, ինչպես նաեւ անհրաժեշտ՝ հղումներ հանդիսացող տեղեկությունները:

11. Ռեեստրի կիրառումը պարտադիր է նոր տեղեկատվական համակարգերի նախագծման եւ գոյություն ունեցող այնպիսի տեղեկատվական համակարգերի արդիականացման դեպքում, որոնք ինտեգրված համակարգի միջոցներով ապահովում են տեղեկատվական փոխգործակցության իրականացումը Մաքսային միության եւ Միասնական տնտեսական տարածքի ընդհանուր գործընթացների իրականացման շրջանակներում:

12. Նոր էլեկտրոնային փաստաթղթերի կամ տեղեկությունների կառուցվածքների մշակումն ու հաստատումը, ինչպես նաեւ այնպիսի նորմատիվ իրավական ակտերի պահանջների կատարման համար անհրաժեշտ

փոփոխությունների կատարումը, որոնք կազմում են Մաքսային միության եւ Միասնական տնտեսական տարածքի իրավապայմանագրային բազան եւ որոնցով անդամ պետությունների լիազոր մարմինների միջեւ, անդամ պետությունների լիազոր մարմինների եւ Հանձնաժողովի միջեւ նախատեսվում է տեղեկատվական փոխգործակցություն, իրականացվում է՝ հաշվի առնելով ռեեստրում առկա՝ էլեկտրոնային փաստաթղթերի եւ տեղեկությունների կառուցվածքների արտոնյալ օգտագործման անհրաժեշտությունը:

ЕВРАЗИЙСКАЯ ЭКОНОМИЧЕСКАЯ КОМИССИЯ
ДЛЯ ДОКУМЕНТОВ